**Երկրորդ ընթերցում**
**Կ-846-23.05.2024-ԳԿ-011**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» 2002 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-465-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

*«Հոդված 2. Պետական մշակութային քաղաքականության կազմակերպումը*

***1. Հայաստանի Հանրապետությունում պետական մշակութային քաղաքականությունը կազմակերպվում է մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագրերով, որոնք հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:***

***Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9- րդ և 10-րդ կետեր.***

***«6) պետություն-մասնավոր հատված համագործակցությունը,***

***7) պետական աջակցության ծրագրերի մասնակցության մեկնարկային պայմանների հավասարությունը՝ անկախ մասնակցի կարգավիճակից,***

***8) արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացումը,***

***9) մշակութային միջոցառումների բազմազանության ապահովումը,***

***10) մշակույթի ապակենտրոնացումը՝ մարզերում պետական մշակութային քաղաքականության ընդլայնումը և համայնքների մշակութային կյանքի ակտիվացումը:***

**Հոդված 3**. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

***«հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը, ինքնագբաղ կամ անկախ ստեղծագործողների գործունեության խթանումը, բարենպաստ միջավայրի ձևավորումը.»:***

**Հոդված 4**. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

***«Մշակույթ՝ մարդկանց, սոցիալական խմբերի կամ հասարակական միավորումների կողմից նյութական և հոգևոր ոլորտներում ստեղծած արժեքների, համոզմունքների, սովորույթների, ավանդույթների, զգայությունների, մտածողության և հասարակական համակեցության կանոնների, վարքագծի ու գործողությունների ամբողջություն, սոցիալական, տնտեսական և ժամանցային համալիր գործունեություն, որը ապահովում է մշակութային արժեքների փոխանցելիությունը, ժառանգականությունը և պահպանությունը, ձևավորում հասարակության ինքնությունը և համախմբում նրանց ընդհանրական արժեքների շուրջ.»,***

***2) 7-րդ պարբերության «ստեղծագործական աշխատող» հասկացությունից հետո լրացնել երեք պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ .***

*«ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործող՝ մասնագիտական հմտություններ ունեցող, մասնագիտական ծառայություններ առաջարկող և ստեղծագործական գործունեությամբ զբաղվող, ստեղծագործական ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող, ինչպես նաև մշակույթի և արվեստի բնագավառում այդ գործունեության միջոցով եկամուտ ստեղծող անձ.*

մշակութային գործունեությամբ զբաղվող անձ՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի գործողության ոլորտներում գործունեություն իրականացնող ***մշակութային կազմակերպությունում գրանցված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով ստեղծագործական գործունեություն իրականացնող անձ***.»:

***ստեղծարար արդյունաբերություն՝ նոր գաղափարների, ստեղծագործական բովանդակության և նորարարությունների արտադրության, մշակութային արժեքների ստեղծման, մշակութային տարբեր արտադրանքների և ծառայությունների ձևավորման, հանրայնացման, փոխանցման, իրացման, վերավաճառքի, բաշխման և սպառման համակարգ»:***

3) 10-րդ և 11-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության մշակութային հարստություն՝ մշակութային արժեքների ամբողջություն, ներառյալ՝ ***մշակութային ժառանգության օբյեկտները և ոչ նյութական մշակութային ժառանգությունը,*** որը հայ ժողովրդի, Հայաստանի Հանրապետության ***քաղաքացի հանդիսացող ազգային փոքրամասնությունների և այլ էթնոմշակութային խմբերի համար*** ունի ազգային նշանակություն.»:

***Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն՝ անցյալում ստեղծված նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների ամբողջություն, որը համաշխարհային ժառանգության բաղկացուցիչ մաս է, և անկախ սեփականության իրավունքից, անհատների և համայնքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների համար ունի մշակութային, հոգևոր, գեղագիտական, զգայական, գիտական, տնտեսական կարևոր նշանակություն, հիմնարար գործոն է Հայաստանի Հանրապետության մշակութային բազմազանության խթանման և կայուն զարգացման համար.»:***

*Հոդված 5. Գլուխ 4-ը շարադրել նոր խմբագրությամբ.*

*«ԳԼՈՒԽ 4.* ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԻՆՔՆԱԶԲԱՂ ԿԱՄ ԱՆԿԱԽ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

**Հոդված 6. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 1.1-1.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.**

**«1.1) խթանում է ստեղծարար արդյունաբերության ոլորտներում ձեռնարկատիրության զարգացումը, օժանդակում ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործող և մշակույթի ոլորտում աշխատող, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց, կազմակերպություններին.**

**1.2) խթանում է ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողների և մշակույթի ոլորտի աշխատողների ցանցային ներգրավվածությունը, գաղափարների գեներացումը, նորարարական և ստեղծագործական գաղափարական թիմերի ձևավորումը, մասնակցայնության ու համագործակցության մոտիվացումը.**

**1.3) նպաստում է մշակույթի ոլորտում հասարակության և տնտեսության զարգացմանն ուղղված համընթաց գործողությունների, ներդրումների, կապիտալի ու ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրմանը, կառավարմանը.»:**

*Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-րդ հոդվածով.*

*«Հոդված 18.1. Մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողները*

*1. Սույն օրենքի 7-րդ հոդվածում սահմանված մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողներն իրականացնում են տվյալ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերին համապատասխան գործառույթներ՝ համաձայն տվյալ պաշտոնի նկարագրի և պայմանագրի:*

*2. Մշակույթի ոլորտի յուրաքանչյուր պետական կազմակերպության աշխատողի կարգավիճակը, աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց ներկայացվող պահանջները և օրինակելի նկարագիրը սահմանում է համապատասխան ոլորտում լիազորված պետական մարմինը:*

*3. Մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով համապատասխան պետական լիազոր մարմնի սահմանած կարգով տվյալ կազմակերպությունը իրականացնում է ատեստավորում, եթե տվյալ ոլորտը կարգավորող օրենքով այլ բան սահմանված չէ: Ատեստավորման անցկացման պարբերականությունը, ժամկետները, արդյունքների բողոքարկման կարգը սահմանում է լիազոր մարմինը:*

*4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր ատեստավորման համար մշակույթի ոլորտի տվյալ կազմակերպությունը ձեւավորում է ատեստավորման հանձնաժողով՝ համաձայն մշակույթի ոլորտում պետական լիազորված մարմնի սահմանած կարգի:*

*5. Ատեստավորման հանձնաժողովը մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողի ատեստավորման արդյունքով կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում:*

*6. Ատեստավորման գործընթացում մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողի ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է դրույքաչափի փոփոխության եւ հավելավճար (ելույթավճար) սահմանման համար: Ատեստավորման արդյունքներով դրույքաչափերի փոփոխության և հավելավճարի (ելույթավճարի) սահմանման դեպքերը և չափը սահմանում է ՀՀ կառավարությունը:*

*7. Ատեստավորման հանձնաժողովի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշման դեպքում մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողի նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգավորումները:»:*

Հոդված 8․ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի ՝

1) 1-ին և 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ․

« 1) ապահովում է պետական մշակութային քաղաքականության իրականացումը և հաստատում մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագիրը,

2) մշակույթի պահպանման, հանրահռչակման և զարգացման նպատակով ստեղծում է մշակույթի զարգացման հիմնադրամ և հաստատում դրա կանոնադրությունը.»․

2) 5-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով․

3) լրացնել 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) սահմանում է ***մշակութային ոչ առևտրային*** կազմակերպությունների պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ***ֆինանսավորման մեխանիզմները.***

7) հաստատում է ***մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների*** պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման կարգերը.

8) հաստատում է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին, այդ թվում՝ ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողներին ***դրամական խրախուսում տրամադրելու վճարման կարգը և չափերը,***

9) հաստատում է պետական մշակութային կազմակերպությունների աշխատողների, այդ թվում՝ ստեղծագործական, վերապատրաստման և ատեստավորման, համապատասխան արդյունքի գրանցման դեպքում հավելավճարների (ելույթավճարների) տրամադրման, ինչպես նաև սակագնային ընդհանուր քաղաքականության սկզբունքների վերաբերյալ ուղենիշային կարգերը.

***10) հաստատում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության առաջնահերթ տարհանման մշակութային արժեքների ցանկը.***

***11) սահմանում է պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում մշակութային ծրագրերի և նախաձեռնությունների համաֆինանսավորման սկզբունքները, կարգը և չափորոշիչները:»:***

**Հոդված 9**. Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) ***1-ին կետում «մշակույթի պահպանման, տարածման և զարգացման պետական ծրագրերի մշակմանը» բառերը փոխարինել «մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագրերի մշակմանը» բառերով,***

2) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. ***«ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչում շնորհելու առաջարկություններ»,***

3) Լրացնել 9.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

***«9.1) մշակում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության առաջնահերթ տարհանման մշակութային արժեքների ցանկը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.»:***

4) 11-րդ կետը շարադրել ***նոր խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում մշակութային ոչ առևտրային կազմակերպություններին՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, թանգարանային, գրադարանային և արխիվային, Համապետական, տարածքային և տեղային, կարգավիճակ շնորհելու վերաբերյալ առաջարկություն:»:***

**Հոդված 10**. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:

**Հոդված 11**. Օրենքի 26-րդ հոդվածը.

1) ***Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝***
***«Մշակութային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը»***

2) լրացնել 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Մշակութային ոչ առևտրային կազմակերպությունը հաստատում է իր կողմից տրամադրվող ծառայությունների սակագները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

**Հոդված 12**. Օրենքի 26.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«***Հոդված 26.1. Մշակութային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը***

***1. Մշակութային առանձին կազմակերպությունների՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, կինոարվեստի, թանգարանային, գրադարանային և արխիվային, որոնք համապետական և համազգային նշանակության բացառիկ գործունեություն են իրականացնում, կարող է շնորհվել «Համապետական» կարգավիճակ:***

***2. «Տարածքային» նշանակության կարգավիճակ շնորհվում է այն մշակութային կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են մարզի շրջանակում՝ բավարարելով մարզային բնակչության մշակութային պահանջմունքները:***

***3. «Տեղային» նշանակության կարգավիճակ շնորհվում է այն մշակութային կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են համայնքի շրջանակում՝ բավարարելով համայնքայի բնակչության մշակութային պահանջմունքները:***

***4. Գործող և նոր ստեղծվող մշակութային կազմակերպություններին «Համապետական, տարածքային և տեղային» կարգավիճակ շնորհելու, փոփոխելու և դադարեցնելու կարգը, նախապայմանները և չափանիշները հաստատում, ինչպես նաև համապատասխան կարգավիճակը շնորհում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազոր մարմնի առաջարկությամբ:»:***

**Հոդված 13**. Օրենքը լրացնել նոր՝ 26.2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 26.2. Մշակույթի զարգացման հիմնադրամի նպատակները և գործառույթները

1. Մշակույթի զարգացման հիմնադրամի նպատակներն են.

1) օժանդակել մշակույթի կառավարման արդյունավետ գործիքակազմի ներդրմանը.

2) աջակցել պետական մշակութային կազմակերպությունների ֆինանսական ինքնավարության խթանմանը, ենթակառուցվածքների զարգացմանն ու արդիականացմանը.

3) իրականացնել մշակութային և ստեղծարար ոլորտների զարգացմանն ուղղված հեռանկարային ծրագրեր.

4) նպաստել հայկական մշակույթի միջազգայնացմանը:

***2. Հիմնադրամն իրականացնում է պետական մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների.***

***1) մարքեթինգային գործառույթները,***

***2) վարչատնտեսական գործընթացի կառավարումը, այդ թվում՝ հաշվապահություն, գնումների գործընթաց, ընթացիկ տեխնիկական սպասարկումը,***

***3) իրականացնում է մշակույթի տվյալ ոլորտը կարգավորող օրենքներով սահմանված այլ գործառույթներ:***

***3. Հիմնադրամի գործառույթների իրականացման կարգը, ներառյալ պետական մարմինների հետ փոխգործակցության մեխանիզմները, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:***

**Հոդված 14**. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 31-րդ հոդվածը:

**Հոդված 15.** Անցումային և եզրափակիչ դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

2. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում:

***3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված և գործող «ազգային» կարգավիճակ ունեցող կազմակերպությունները պահպանում են իրենց կարգավիճակը:***

*~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում*

*Կ-846-23.05.2024-ԳԿ-011/1*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** ~~Ուժը կորցրած ճանաչել~~ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» 2002 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-465-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը ~~։~~*շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.*

*~~«~~«Հոդված 2. Պետական մշակութային քաղաքականության կազմակերպումը*

*1. Հայաստանի Հանրապետությունում պետական մշակութային քաղաքականությունը կազմակերպվում է մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագրերով, որոնք հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:*

*Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ, 7-րդ, 8-րդ, -9--րդ և 10-րդ կետեր.*

*«6) պետություն-մասնավոր հատված համագործակցությունը,*

*7) պետական աջակցության ծրագրերի մասնակցության մեկնարկային պայմանների հավասարությունը՝ անկախ մասնակցի կարգավիճակից,*

*8) արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացումը,*

*9) մշակութային միջոցառումների բազմազանության ապահովումը,*

*10) մշակույթի ապակենտրոնացումը՝ մարզերում պետական մշակութային քաղաքականության ընդլայնումը -և համայնքների մշակութային կյանքի ակտիվացումը:*

***Հոդված ~~2~~3.*** Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի **3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.**~~։~~

*«հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը, ինքնագբաղ կամ անկախ ստեղծագործողների գործունեության խթանումը, բարենպաստ միջավայրի ձևավորումը.»:*

3-րդ կետը «ստեղծումը» բառից հետո լրացնել «, ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների գործունեության խթանումը, բարենպաստ միջավայրի ձեւավորումը» բառերով:»:

***Հոդված 34.*** Օրենքի 6-րդ հոդվածի՝

***1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.***

***«Մշակույթ՝ մարդկանց, սոցիալական խմբերի կամ հասարակական միավորումների կողմից նյութական և հոգևոր ոլորտներում ստեղծած արժեքների, համոզմունքների, սովորույթների, ավանդույթների, զգայությունների, մտածողության և հասարակական համակեցության կանոնների, վարքագծի ու գործողությունների ու վարքագծի ամբողջություն, սոցիալական, տնտեսական և ժամանցային համալիր գործունեություն, որը ապահովում է մշակութային արժեքների փոխանցելիությունը, ժառանգականությունը և պահպանությունը, ձևավորում հասարակության ինքնությունը և համախմբում նրանց ընդհանրական արժեքների շուրջ.»,***

2) 17-րդ -ին մասը պարբերության «ստեղծագործական աշխատող» հասկացությունից հետո լրացնել նոր երեք պարբերություններով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ինքնազբաղ/անկախ ստեղծագործող՝ որեւէ ստեղծագործական աշխատողների միության չանդամակցող եւ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ.

«**ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործող՝** *մասնագիտական* հմտություններ ունեցող, մասնագիտական ծառայություններ առաջարկող և ստեղծագործական գործունեությամբ զբաղվող, ստեղծագործական ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող, ինչպես նաև մշակույթի և արվեստի բնագավառում *այդ* գործունեության միջոցով եկամուտ ստեղծող անձ.

**մշակութային գործունեությամբ զբաղվող անձ՝** սույն օրենքի 7-րդ հոդվածի գործողության ոլորտներում գործունեություն իրականացնող կամ և մշակութային ոչ առեւտրային կազմակերպությունում ***գրանցված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով***գրանցված ան հաստիքացուցակում ներառված մշակութայինհաստիքային կամ պայմանագրային հիմունքներով ստեղծագործական կամ գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ.»:

***ստեղծարար արդյունաբերություն***՝ *նոր գաղափարների, ստեղծագործական բովանդակության և նորարարությունների արտադրության, մշակութային արժեքների ստեղծման, մշակութային տարբեր արտադրանքների և ծառայություններ ձևավորման, հանրայնացման, փոխանցման, իրացման, վերավաճառքի, բաշխման և սպառման համակարգ:*

***Հոդված 4.*** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության մշակութային հարստություն» հասկացությունը

*3) 10-րդ* ***և 11-րդ պարբերությունները*** շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«***Հայաստանի Հանրապետության մշակութային հարստություն***՝ մշակութային արժեքների ամբողջություն, (այդ թվում՝ ներառյալ՝ մշակութային ժառանգության օբյեկտները և ոչ նյութական մշակութային ժառանգությունը), որը հայ ժողովրդի, և Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ազգային փոքրամասնությունների ***և այլ էթնոմշակութային խմբերի*** համար ունի ազգային նշանակություն.»:

***Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն***՝ *անցյալում ստեղծված նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների ամբողջություն, որը համաշխարհային ժառանգության բաղկացուցիչ մաս է, և անկախ սեփականության իրավունքից, անհատների և համայնքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների համար ունի մշակութային, հոգևոր, գեղագիտական, զգայական, գիտական, տնտեսական կարևոր նշանակություն, հիմնարար գործոն է Հայաստանի Հանրապետության մշակութային բազմազանության խթանման և կայուն զարգացման համար.»:*

***Հոդված 5. Գլուխ 4-ը շարադրել նոր խմբագրությամբ.***

***«ԳԼՈՒԽ 4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԻՆՔՆԱԶԲԱՂ ԿԱՄ ԱՆԿԱԽ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»***

***Հոդված 56. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 12.1-12.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.***

***«12.1) խթանում է ստեղծարար արդյունաբերության ոլորտներում ձեռնարկատիրության զարգացմումը, օժանդակում ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործող և մշակույթի***

*ոլորտում աշխատող ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ, կազմակերպություններին.*

*1~~2~~.2) խթանում է ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողների և մշակույթի ոլորտի աշխատողների ցանցային ներգրավվածությունը, գաղափարների գեներաց~~մ~~ում~~ն~~ը, նորարարական և ստեղծագործական գաղափարական թիմերի ձևավորումը, մասնակցայնության ու համագործակցության մոտիվացումը.*

*1~~2~~.3) նպաստում է մշակույթի ոլորտում հասարակության և տնտեսության զարգացմանն ուղղված համընթաց գործողությունների, ներդրումների, ~~համարեղ~~ կապիտալի ու ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրմանը, կառավարմանը.»:*

*Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-րդ հոդվածով.*

*«Հոդված 18.1. Մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողները*

*1. Սույն օրենքի 7-րդ հոդվածում սահմանված մշակույթի ոլորտների պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողներն իրականացնում են տվյալ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերին համապատասխան գործառույթներ՝ համաձայն տվյալ պաշտոնի նկարագրի և պայմանագրի:*

*2. Մշակույթի ոլորտի յուրաքանչյուր պետական կազմակերպության աշխատողի կարգավիճակը, աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց ներկայացվող պահանջները և օրինակելի նկարագիրը սահմանում է համապատասխան ոլորտում լիազորված պետական մարմինը:*

*3. Մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով համապատասխան պետական լիազոր մարմնի սահմանած կարգով տվյալ կազմակերպությունը իրականացնում է ատեստավորում, եթե տվյալ ոլորտը կարգավորող օրենքով այլ բան սահմանված չէ:*

*4~~5~~. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր ատեստավորման համար մշակույթի ոլորտի կազմակերպությունը ձեւավորում է ատեստավորման հանձնաժողով՝ համաձայն մշակույթի ոլորտում պետական լիազորված մարմնի սահմանած կարգի:*

*5~~6~~. Ատեստավորման հանձնաժողովը մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության~~—~~ աշխատողի ատեստավորման արդյունքով կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում:*

*6~~7~~. Ատեստավորման գործընթացում~~—~~ մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության~~—~~ աշխատողի ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է դրույքաչափի փոփոխության եւ հավելավճար (ելույթավճար) սահմանման համար: Ատեստավորման արդյունքներով դրույքաչափերի փոփոխության և հավելավճարի (ելույթավճարի) սահմանման դեպքերը և չափը սահմանում է ՀՀ կառավարությունը:*

*7~~8~~. Ատեստավորման հանձնաժողովի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշման դեպքում մշակույթի ոլորտի պետական ~~և համայնքային~~ ոչ առևտրային կազմակերպության աշխատողի նկատմամբ կիրառելի են~~է~~ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգավորումները:»:*

***Հոդված ~~5~~8~~7~~.*** Օրենքի 21-րդ հոդվածի *1-ին մասի*՝

1.~~.~~ ~~1-ին մասի~~ 1-ին և 2-րդ կետերը շարադրել ~~նոր խմբագրությամբ՝~~ հետեւյալ բովանդակությամբ.

1) ապահովում է պետական մշակութային քաղաքականության իրականացումը և հաստատում մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագիրը.

2) մշակույթի պահպանման, հանրահռչակման եւ զարգացման նպատակով ստեղծում է մշակույթի զարգացման հիմնադրամ եւ հաստատում դրա կանոնադրությունը.».

2.~~).~~ ~~1-ին մասի~~ 5-րդ կետ~~ի վերջակետը փոխարինել միջակետով.~~ը շարադրել նոր խմբագրությամբ.

***5) «ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչում շնորհելու առաջարկություններ»,***

3. ~~1-ին մասը~~ լրացնել ~~նոր՝~~ 6-րդ, 7-րդ, 8-րդ~~, եւ~~ 9-րդ և 10-րդ կետերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«6) սահմանում է ~~պետական~~ մշակութային ոչ առեւտրային կազմակերպություններին ~~հանդիսացող մշակութային հաստատությունների~~ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման ~~սկզբունքները~~մեխանիզմները.

7) հաստատում է ~~պետական~~ մշակութային ոչ առեւտրային կազմակերպություններին ~~հանդիսացող մշակութային հաստատությունների~~ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսավորման կարգերը.

8) հաստատում է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների եւ մրցանակաբաշխությունների մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին, *այդ թվում՝ ինքնագբաղ կամ անկախ ստեղծագործողներին* դրամական խրախուսում ~~անվանական թոշակ~~ տրամադրելու վճարման կարգը եւ չափերը.

9) հաստատում է պետական մշակութային կազմակերպությունների աշխատողների~~ակիցների վերապատրաստման~~, այդ թվում՝ ստեղծագործական, վերապատրաստման~~,~~ ~~անձնակազմի~~ և ատեստավորման, ~~–~~համապատասխան արդյունքի գրանցման դեպքում ~~եւ~~ հավելավճարների ~~(~~ելույթավճարների) տրամադրման, ինչպես նաեւ սակագնային ընդհանուր քաղաքականության սկզբունքների վերաբերյալ ուղենիշային կարգերը.~~:»:~~

***10) հաստատում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության առաջնահերթ փարհանման մշակութային արժեքների ցանկը~~.~~***

11) սահմանում է պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում մշակութային ծրագրերի և նախաձեռնությունների համաֆինանսավորման սկզբունքները, կարգը և չափորոշիչները *:»:*

***Հոդված 698.*** Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 11-ին կետում «. մշակույթի պահպանման, տարածման և զարգացման պետական ծրագրերի մշակմանը» բառերը փոխարինել «***մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագրերի մշակմանը» բառերով***

2)

1)

2) 2) 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. ***«ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրելու առաջարկություններ»,***

3) 5-րդ կետում ը ուժը կորցրած ճանաչել.*հանել **«մշակույթի ոլորտում պատվավոր կոչումներ շնորհելու» բառերը,***

լրացնել 9.1-րդ և 9.2-րդ կետով եր՝ հետևյալ բովանդակությամբ.

***«9.1) մշակում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության առաջնահերթ փարհանման մշակութային արժեքների ցանկը և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.***

43) 2. 2-րդ մասի 111-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. ***«Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում մշակութային ոչ առևտրային կազմակերպություններին՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, թանգարանային, գրադարանային և արխիվային, Համապետական, տարածքային և տեղային, կարգավիճակ շնորհելու վերաբերյալ առաջարկություն:»:***

1-րդ կետի «Ազգային» բառը փոխարինել «Պետական ***Համապետական, տարածքային և տեղային*** » բառերով:»:

***Հոդված 7109.*** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը:

***Հոդված 8110.*** Օրենքի 26-րդ հոդվածը՝

3) Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 26.** Մշակութային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը-»

2) լրացնել նոր՝ 4-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4. Մշակութային ոչ առեւտրային կազմակերպությունը հաստատում է իր կողմից տրամադրվող ծառայությունների սակագները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:, ինչպես նաեւ իրականացնում է աշխատակիցների պարբերական ատեստավորման գործընթացը:»:

***Հոդված 129.*** Օրենքի 26.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

***«Հոդված 26.1. Մշակութային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը***

***5. Մշակութային առանձին կազմակերպությունների՝ թատերական, երաժշտա-կան, պարարվեստի, կինոարվեստի, թանգարանային, գրադարանային և արխիվային, որոնք համապետական և համազգային նշանակության բացառիկ գործունեություն են իրականացնում, կարող է շնորհվել «Համապետական» կարգավիճակ:***

6. ***«Տարածքային» նշանակության կարգավիճակ շնորհվում է այն մշակութային կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են մարզի շրջանակում՝ բավարարելով մարզային բնակչության մշակութային պահանջմունքները:***

7. ***«Տեղային» նշանակության կարգավիճակ շնորհվում է այն մշակութային կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են համայնքի շրջանակում՝ բավարարելով համայնքայի բնակչության մշակութային պահանջմունքները:***

8. ***Գործող և նոր ստեղծվող մշակութային կազմակերպություններին «Համա-պետական, տարածքային և տեղային» կարգավիճակ շնորհելու փոփոխելու և դադարեցնելու կարգը, –նախապայմանները և չափանիշները հաստատում, ինչպես նաև համապատասխան կարգավիճակը շնորհում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազոր մարմնի առաջարկությամբ:»:***

1) 1. 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերում «Ազգային» բառը փոխարինել «Պետական» բառերով, իսկ.

2. 1-ին մասում «ֆիլմարվեստի» բառը փոխարինել «կինոարվեստի» բառով.

2) 3. 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

***3) 2-րդ մասի 2-րդ պարբերության և 3-րդ մասի «Ազգային» բառը փոխարինել «Պետական» բառով,***

4) 2-րդ մասի 1-ին2-րդ կետի պարբերության 1-ին կետում «տարածմանը» բառը փոխարինել «տարածումը» բառով.

~~45). 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:~~

~~***Հոդված 12.*** Օրենքը լրացնել նոր՝ 26.2-րդ հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.~~

~~*«Հոդված 26.2. Մշակույթի զարգացման հիմնադրամի գործառույթները*~~

~~Մշակույթի զարգացման հիմնադրամը ներդնում է թանգարանների արդյունավետ կառավարման, թատերահամերգային եւ այլ մշակութային ոչ առեւտրային կազմակերպությունների հետագա զարգացման մեխանիզմներ, իրականացնում լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման եւ Հայաստանի Հանրապետությունում ու միջազգային հարթակներում հայ մշակույթի հանրահռչակմանն ուղղված գործառույթներ:»:~~

***Հոդված 13~~2~~.*** *Օրենքը լրացնել նոր՝ 26.2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.*

*«Հոդված 26.2. Մշակույթի զարգացման հիմնադրամի նպատակները և գործառույթները*

*1. Մշակույթի զարգացման հիմնադրամի նպատակներն են.*

*1) օժանդակել մշակույթի կառավարման արդյունավետ գործիքակազմի ներդրմանը.*

*2) աջակցել պետական մշակութային կազմակերպությունների ֆինանսական ինքնավարության խթանմանը, ենթակառուցվածքների զարգացմանն ու արդիականացմանը.*

*3) աջակցել պետական մշակութային կազմակերպությունների ֆինանսական ինքնավարության խթանմանը, ենթակառուցվածքների զարգացմանն ու արդիականացմանը.*

*4) իրականացնել մշակութային և ստեղծարար ոլորտների զարգացմանն ուղղված հեռանկարային ծրագրեր.*

*5) նպաստել հայկական մշակույթի միջազգայնացմանը:*

*2. Հիմնադրամն իրականացնում է պետական մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների.*

*4) մարքեթինգային գործառույթները,*

*5) վարչատնտեսական գործընթացի կառավարումը, այդ թվում՝ հաշվապահություն, գնումների գործընթաց, ընթացիկ տեխնիկական սպասարկումը,*

6) ***իրականացնում է մշակույթի փվյալ ոլորտը կարգավորող օրենքներով սահմանված գործառույթներ:***

3. Հիմնադրամի գործառույթների իրականացման կարգը, ներառյալ պետական մարմինների հետ փոխգործակցության մեխանիզմները, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

***Հոդված 11143.*** Ուժի կորցրած ճանաչել օրենքի 31-րդ հոդվածը:
***Հոդված 12154.*** Օրենքի 32-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
*«Հոդված 32. Անցումային եւ եզրափակիչ դրույթներ.*
1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

2. Օրենքից ***Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում:***

3. Մշակութային հաստատությունների անվանումների համապատասխանեցումները ավարտվում են մինչեւ 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:»:
***3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված և գործող «ազգային» կարգավիճակ ունեցող կազմակերպությունները պահպանում են իրենց կարգավիճակը:***

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ (Կ-846-23.05.2024-ԳԿ-011/1 ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| 1. | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **1-ին հոդված** | Առաջարկում ենք հոդվածը ոչ թե ուժը կորցրած ճանաչել այլ խմբագրել, քանի որ ըստ էության փոփոխվել է պետական ռազմավարական ծրագիրը հաստատող մարմինը:<br>**«Հոդված 1**. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» 2002 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-465-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը **շարադրել նոր խմբագրությամբ.**<br>*«Հոդված 2. Պետական մշակութային քաղաքականության կազմակերպումը*<br>«1. Հայաստանի Հանրապետությունում պետական մշակութային քաղաքականությունը կազմակերպվում է մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագրերով, որոնք հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 2 | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | ***Հոդված 1*** | 2. Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Օրենքի 2-րդ, 31-րդ հոդվածները, որոնք նվիրված են պետական ծրագրերին, մասնավորապես՝ այդպիսիք կազմելու ու հաստատելու կարգին, մինչդեռ՝ 8-րդ | Ընդունվել է, 1-ին հոդվածը խմբագրվել է Ամփոփաթերթի | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոդվածում, 22-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում, 27-րդ հոդվածում պահպանվում են հղումներ՝ ,պետական ծրագրի եզրույթի վրա, ինչն արդեն ներքին հակասություններին զուգահեռ, աղճատել է իրավական որոշակիությունը: | 1-ին կետ | |
| 3 | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան ՀՀ կառավարությու ն | **1-ին հոդվածից հետո լրացվող նոր 2-րդ հոդված** | Առաջարկում ենք լրացնել նոր 2-րդ հոդված՝ պետական քաղաքականության սկզբունքներում լրացնելով մշակույթի ոլորտի համար ուղենիշային համարվող դրույթները, որոնք ամրագրվել են «Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թթ.» ռազմավարություն»-ում: Դրանց ամրագրումը անհրաժեշտ են նաև նախագծով ներդրվող նպատակները ապահովելու համար: Այսպիսով.<br>«Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9- րդ և 10-րդ կետեր.<br>«6) պետություն-մասնավոր հատված համագործակ-ցությունը,<br>7) պետական աջակցության ծրագրերի մասնակցության մեկնարկային պայմանների հավասարությունը՝ անկախ մասնակցի կարգավիճակից,<br>8) արվեստի տարբեր բնագավառների համաչափ զարգացումը,<br>9) մշակութային միջոցառումների բազմազանության ապահովումը,<br>10) մշակույթի ապակենտրոնացումը՝ մարզերում պետական մշակութային քաղաքականության ընդլայնումը և համայնքների մշակութային կյանքի ակտիվացումը:» | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Լրացման արդյունքում հոդվածների համարակալումը վերանայվել է: | | |
| 4. | | **Հոդված 2**<br>**Նոր հոդված 3.** | Առաջարկվում է փոփոխվող կետը շարադրել ամբողջությամբ.<br>Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>*«հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը, ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողների գործունեության խթանումը, բարենպաստ միջավայրի ձևավորումը.»:* | Ընդունվել է | Ընդունվել է |
| 5. | ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Հոդված 3-րդ (խմբագրված 4-րդ) և 4-րդ հոդված** | Առաջարկում ենք լրամշակել գործող օրենքի և նախագծով ներդրվող հասկացությունները՝ դրանք համապատասխանեցնելով մշակույթի ոլորտի վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերին, մասնավորապես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանումներին:<br>Կատարել նաև տեխնիկական շտկումներ, միավորել 3-րդ և 4-րդ հոդվածները, (միավորման արդյունքում որպես լրամշակված 4-րդ հոդված) և կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.<br>«***Հոդված 4.*** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում.<br>1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«**Մշակույթ՝** մարդկանց, սոցիալական խմբերի կամ հասարակական միավորումների կողմից նյութական և հոգևոր ոլորտներում ստեղծած արժեքների, համոզմունքների, սովորույթների, ավանդույթների, զգայունությունների, մտածողության և հասարակական համակեցության կանոնների, վարքագծի ու գործողությունների ու վարքագծի ամբողջություն, սոցիալական, տնտեսական և ժամանցային համալիր գործունեություն, որը ապահովում է մշակութային | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արժեքների փոխանցելիությունը, ժառանգականությունը և պահպանությունը, ձևավորում հասարակության ինքնությունը և համախմբում նրանց ընդհանրական արժեքների շուրջ.», **Մեկնաբանություն**- ձևակերպումը սահմանվել է համաձայն Յունեսկոյի արձանագրային որոշումների. **2)** 7-րդ պարբերության «ստեղծագործական աշխատող» հասկացությունից հետո լրացնել երեք պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ . «**ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործող**՝ մասնագիտական հմտություններ ունեցող, մասնագիտական ծառայություններ առաջարկող և ստեղծագործական գործունեությամբ զբաղվող, ստեղծագործական ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող, ինչպես նաև մշակույթի և արվեստի բնագավառում այդ գործունեության միջոցով եկամուտ ստեղծող անձ. **Մեկնաբանություն-** առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի մոտեցումը պարտադիր էր դարձնում անկախ ստեղծագործողի անդամակ-ցությունը որևէ ստեղծագործական միավորման կամ պայմանագրային աշխատանքը: Դա չի արտահայտում անկախ ստեղծագործողի հետ հարաբերությունների սկզբունքներին: Սահմանումը առաջարկվել է միջազգային իրավունքի նորմերի ուսումնասիրության արդյունքում: **մշակութային գործունեությամբ զբաղվող անձ՝** սույն օրենքի 7-րդ հոդվածի գործողության ոլորտներում գործունեություն իրականացնող մշակութային կազմակերպությունում գրանցված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով ստեղծագործական գործունեություն իրականացնող | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անձ.»: **Մեկնաբանություն-** առաջին ընթերցմամբ ընդունված նախագծով մշակութային գործունեությամբ զբաղվող անձը պետք է լինի կազմակերպությունում գրանցված հաստիքային աշխատող: Նման մոտեցումը սահմանփակում է մշակույթի որոշ ոլորտների գործունեությունը և մասնագետներ և ստեղծագործող անձնաց ներգրավելու այլընտրանքային հնարավորություն-ները, որով ոլորտը առավել ստեղծարար և մրցակցային կարող է լինել: **ստեղծարար արդյունաբերություն՝** նոր գաղափարների, ստեղծագործական բովանդակութ-յան և նորարարությունների արտադրության, մշակութային արժեքների ստեղծման, մշակութային տարբեր արտադրանքների և ծառայությունների ձևավորման, պահպանման, հանրայնացման, փոխանցման, իրացման, վերավաճառքի, բաշխման և սպառման համակարգ: **Մեկնաբանություն-** նոր սահմանում առաջարկելու անհրաժեշտությունը պայմանավորված է մշակույթի ոլորտի գործունեությունն ու զարգացումն ապահովող բոլոր ենթահամակարգերը ամբողջացնելու և դրանց միջև իրավահարաբերությունները կանոնակարգելու հանգամանքով: 3) 10-րդ և 11-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**Հայաստանի Հանրապետության մշակութային հարստություն՝** մշակութային արժեքների ամբողջություն, ներառյալ՝ մշակութային ժառանգության օբյեկտները և ոչ նյութական մշակութային ժառանգությունը, որը հայ ժողովրդի, Հայաստանի Հանրապետության քաղաքացի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանդիսացող ազգային փոքրամասնությունների և այլ էթնոմշակութային խմբերի համար ունի ազգային նշանակություն.»:<br>**Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն՝** անցյալում ստեղծված նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների ամբողջություն, որը համաշխարհային ժառանգության բաղկացուցիչ մաս է, և անկախ սեփականության իրավունքից, անհատների և համայնքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների համար ունի մշակութային, հոգևոր, գեղագիտական, զգայական, գիտական, տնտեսական կարևոր նշանակություն, հիմնարար գործոն է Հայաստանի Հանրապետության մշակութային բազմազանության խթանման և կայուն զարգացման համար.»:»<br>**Մեկնաբանություն-** ՀՀ մշակութային հարաստության հասկացությունը խմբագրելու առաջարկը և մշակութային ժառանգությունը խմբագրելու նոր առաջարկը պայմանավորված է միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցնելու միտումով: | | |
| 6. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 3.** | 1) ,ինքնազբաղ (անկախ) ստեղծագործող հասկացության սահմանումը լայն է և զուրկ իրավական որոշակիությունից, որից հետևում է, որ անհատ ձեռնարկատիրական ցանկացած գործունեություն իրականացնող անձ կարող է դիտարկվել որպես անկախ ստեղծագործող: | Ընդունվել է, Հասկացությունը խմբագրվել է, որոշակիացվել է Նոր լրացվող 5-րդ և 7-րդ հոդված-ներում ամրապնդ-վել է պետական համագործակցության և | Ընդունվել է Խմբագրված տարբերակը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | աջակցութ-յան հիմքերը | |
| 7. | | | 2) Ոչ նախագծում, ոչ էլ գործող օրենքում սահմանված չեն այն սկզբունքները, չափանիշները և կարգավորումները, որոնց հիմքով տվյալ անձինք կարող են դառնալ սուբյեկտ: Սահմանել այն չափանիշները և սկզմունքները, որոնք թույլ կտան հստակ որոշել ինքնազբաղ ստեղծագործողի կարգավիճակը: | Ընդունվել է մասնակի Նախատեսվում է ենթաօրենսդրական կարգավորում | Ընդունվել է խմբագրված տարբերակը |
| | | | 3) Հստակեցնել այն ինստիտուտը, ով պետք է վարի կամ կազմի ինքնազբաղ արվեստագետների ռեեստրը, ցանկը: | Չի ընդունվել, քանի որ սույն նախագծով չի ենթադրվում ռռեստրի ներդում: | |
| 8. | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | | Նախագծի 3-րդ հոդվածով սահմանված մշակութային գործունեությամբ զբաղվող անձ հասկացությունը կրկնում է Օրենքում արդեն սահմանված ստեղծագործական գործունեությամբ զբաղվող անձի բովանդակությունը: | Ընդունվել է խմբագրվել է Տես 4-րդ կետի մեկնաբանությունը | Ընդունվել է |
| 9. | Կառավարություն | **Լրացվող նոր 5-րդ հոդված** | Հոդված 5. Գլուխ 4-ը շարադրել նոր խմբագրությամբ. «ԳԼՈՒԽ 4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԻՆՔՆԱԶԲԱՂ ԿԱՄ ԱՆԿԱԽ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» | Ընդունվել է | Ընդունվել է |
| 10 | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | | Առաջարկում ենք լրացնել նոր հոդված և գործող օրենքի 18-րդ հոդվածում լրացնել մշակույթի ոլորտի ռազմավարական ուղղություններից բխող պետության ստանձնած գործառույթները: Դրանք անհրաժեշտ են նաև նախագծով սահմանված նպատակները ապահովելու համար: Այսպիսով՝ առաջարկվում է. «Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | լրացնել 1.1-1.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ. «2.1) խթանում է ստեղծարար արդյունաբերության ոլորտներում ձեռնարկատիրության զարգացումը, օժանդակում ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործող և մշակույթի ոլորտում աշխատող, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց, կազմակերպություններին. 2.2) խթանում է ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողների և մշակույթի ոլորտի աշխատողների ցանցային ներգրավվածությունը, գաղափարների գեներացումը, նորարարական և ստեղծագործական գաղափարական թիմերի ձևավորումը, մասնակցայնության ու համագործակցության մոտիվացումը. 2.3) նպաստում է մշակույթի ոլորտում հասարակության և տնտեսության զարգացմանն ուղղված համընթաց գործողությունների, ներդրումների, համատեղ կապիտալի ու ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրմանը, կառավարմանը.»:» | | |
| 11 | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Լրացվող նոր 7-րդ հոդված** | Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծով լիազոր մարմնին վերապահված էր լիազորություն՝ մշակույթի ոլորտի աշխատողների վերապատրաստման, ատեստավորման և հավելավճարի սահմանման կարգ: Ըստ էության լիազորող նորմը վերաբերում է մշակութային բոլոր կազմակերպություններին, որը սխալ մոտեցում է: բացի դրանից ոչ օրենքով ոչ էլ նախագծով չի կարգավորված նշված հարաբերությունների կազմակերպման հետ կապված այլ դրույթներ, որոնք նախապայմաններ, իրավունքներ և սահմանափակումներ են պարունակում: Հետևաբար | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առաջարկվում է լրացնել նոր հոդված, որով առավել հստակ կսահմանվի վերապատրաստման և ատեստավորման ենթակա աշխատողների շրջանակը և գործընթացներն իրականացնելու ընթացքը:<br>Առաջարկում ենք լրացնել նոր 6-րդ հոդված՝ սահմանելու համար ատեստավորման ենթակա աշխատողների շրջանակը, նախապայմանները և իրավական հետևանքը:<br>«Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-րդ հոդվածով.<br>«Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-րդ հոդվածով.<br>«Հոդված 18.1. Մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողները<br>1. Սույն օրենքի 7-րդ հոդվածում սահմանված մշակույթի ոլորտների պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողներն իրականացնում են տվյալ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերին համապատասխան գործառույթներ՝ համաձայն տվյալ պաշտոնի նկարագրի և պայմանագրի:<br>2. Մշակույթի ոլորտի յուրաքանչյուր պետական կազմակերպության աշխատողի կարգավիճակը, աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց ներկայացվող պահանջները և օրինակելի նկարագիրը սահմանում է համապատասխան ոլորտում լիազորված պետական մարմինը:<br>3. Մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով համապատասխան պետական լիազոր մարմնի սահմանած կարգով տվյալ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպությունը իրականացնում է ատեստավորում, եթե տվյալ ոլորտը կարգավորող օրենքով այլ բան սահմանված չէ: Ատեստավորման անցկացման պարբերականութ-յունը, ժամկետները, արդյունքների բողոքարկման կարգը սահմանում է լիազոր մարմինը:<br>4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր ատեստավորման համար մշակույթի ոլորտի տվյալ կազմակերպությունը ձեւավորում է ատեստավորման հանձնաժողով՝ համաձայն մշակույթի ոլորտում պետական լիազորված մարմնի սահմանած կարգի:<br>5. Ատեստավորման հանձնաժողովը մշակույթի ոլորտի պետական ոչ առեւտրային կազմակերպության աշխատողի ատեստավորման արդյունքով կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ չի համապատասխանում:<br>6. Ատեստավորման գործընթացում մշակույթի ոլորտի պետական ոչ առեւտրային կազմակերպության աշխատողի ցուցաբերած արդյունքը հիմք է դրույքաչափի փոփոխության եւ հավելավճար (ելույթավճար) սահմանման համար: Ատեստավորման արդյունքներով դրույքաչափերի փոփոխության և հավելավճարի (ելույթավճարի) սահմանման դեպքերը և չափը սահմանում է ՀՀ կառավարությունը:<br>7. Ատեստավորման հանձնաժողովի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշման դեպքում մշակույթի ոլորտի պետական ոչ առեւտրային կազմակերպության աշխատողի նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի՝ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգավորումները:»:» | | |
| 12 | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Հոդված 5-րդ (Խմբագրված 8-րդ)** | Պետական, համայնքային և ոչ պետական (մասնավոր) մշակութային կազմակերպություններին և ինքնաշխատ ստեղծագործողներին պետական բյուջեից ֆինանսավորելու դեպքերը, մեխնիզմները հստակեցնելու և ծրագրային ու պահպանման ծախսերը հստակեցնելու համար, առաջարկվում է հոդվածը խմբագրել հետևյալ կերպ.<br><br>1. Առաջին կետը խմբագրել և լրացնել նոր 1-ին կետ հետևյալ բովանդակությամբ.<br>«1) 1-ին և 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.<br>«1) ապահովում է պետական մշակութային քաղաքականության իրականացումը և հաստատում մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագիրը»,<br><br>2. 3-րդ կետը խմբագրել՝<br>«3. լրացնել 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.<br>«6) սահմանում է մշակութային ոչ առևտրային կազմակերպություններին պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմները.<br>7) հաստատում է մշակութային ոչ առևտրային կազմակերպություններին պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման կարգերը.<br>8) հաստատում է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին, այդ թվում՝ | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողներին դրամական խրախուսում տրամադրելու վճարման կարգը և չափերը,<br>9) հաստատում է պետական մշակութային կազմակերպությունների աշխատողների, այդ թվում՝ ստեղծագործական, վերապատրաստման և ատեստավորման, համապատասխան արդյունքի գրանցման դեպքում հավելավճարների (ելույթավճարների) տրամադրման, ինչպես նաև սակագնային ընդհանուր քաղաքականության սկզբունքների վերաբերյալ ուղենիշային կարգերը.<br>10) հաստատում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության առաջնահերթ տարհանման մշակութային արժեքների ցանկը.<br>11) սահմանում է պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում մշակութային ծրագրերի և նախաձեռնությունների համաֆինանսավորման սկզբունքները, կարգը և չափորոշիչները:»: | | |
| 13 | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 5, 3-րդ մաս** | Կառավարությանը լիազորող նորմերում, ամրագրված է նաև,. . . ստեղծագործական անձնակազմի ատեստավորման և ելույթավճարների տրամադրման, ինչպես նաեւ սակագնային ընդհանուր քաղաքականության սկզբունքների վերաբերյալ ուղենիշային կարգերի հաստատումը, ինչը հակասում է ստեղծագործական գործունեության ազատության և մշակութային կազմակերպությունների ինքնուրույնության սկզբունքին: | Ընդունվել է խմբագրվել է, հստակեցվել է Նախագծի 7-րդ հոդվածով լրացվել է նոր 18.1 հոդված | Ընդունվել է խմբագրված տարբերակը |
| 14 | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Հոդված 6, նոր հոդ.9** | Ապահովելու համար նախագծի 1-ին հոդվածի խմբագրված կարգավորումը, անհրաժեշտ է համապատասխան լիազորող նորմը սահմանել նաև Կառավարության և Լիազոր մարմնի լիազորություններում: Հետևաբար, առաջարկվում է. | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ~~5)~~6) 1-ին կետում «մշակույթի պահպանման, տարածման և զարգացման պետական ծրագրերի մշակմանը» բառերը փոխարինել «մշակույթի պահպանման, զարգացման և տարածման պետական ռազմավարական ծրագրերի մշակմանը» բառերով<br><br>Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծով առաջարկվում էր հանել գործող օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ կետը: Սակայն «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում պատվավոր կոչումներին վերաբերելի հոդվածները ուժը կորցրած են ճանաչվել, իսկ պետական պարգևների շնորհման հարաբերությունները ուժի մեջ են: Հետևաբար, օրենսդրական հակասությունը կանխելու համար առաջարկվում է ոչ թե ամբողջությամբ հանել, այլ՝<br>2) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչում շնորհելու առաջարկություններ»,<br>Մշակութային ժառանգության պահպանման և դրանց անվտանգության միջոցառումներից ելնելով, ներկա ժամանակների անհրաժեշտություն է կարգավորել ռազմական դրության և արտակարգ իրավիճակներում դրանց պահպանության միջոցառումները: Միջազգային նորմերի ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է.<br>1) լրացնել 9.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.<br>«9.1) մշակում է ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության առաջնահերթ տարհանման մշակութային արժեքների ցանկը և ներկայացնում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.»:<br>Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծով «Ազգային» բառը «Պետական» բառով փոխարինելու հետ կապված կարող է երկիմաստություն առաջանալ, քանի որ բոլոր ժամանակներում պետական բառը կիրառվել և ընկալվել է որպես Կառավարության կողմից հիմնադրված կազմակերպություն, իսկ նոր մոտեցմամբ, որպես բացառիկ կարգավիճակ: Սակայն Ազգային բառի խմբագրման իմաստը ըստ էության կազմակերպությունների դերի և նշանակալիության շեշտադրումն է, որը կարող է լինել նաև տարածքային և տեղային: Հետևաբար առաջարկվում է.<br>2) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում մշակութային ոչ առևտրային կազմակերպու-թյուններին՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, թանգարանային, գրադարանային և արխիվային, Համապետական, տարածքային և տեղային, կարգավիճակ շնորհելու վերաբերյալ առաջարկություն:»:<br>3) Հիմնավորումը վերաբերում է նաև նախագծի 11-րդ հոդվածին: | | |
| 15 | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Հոդված 8, Նոր հոդ. 11** | Վերնագիրը խմբագրել, քանի որ հոդվածը կազմակերպությունների տեսակների մասի չէ.<br>Առաջին մասը շարադրել հետևյալ լրացումով.<br>«Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br>Մշակութային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 16 | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 5 և 8**<br>**Նոր՝ հոդ՝ 7, 10** | Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում, ինչպես նաև նախագծի 8-րդ հոդվածում նշվում է մշակութային ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվելիք ատեստավորման գործընթացի մասին՝ մինչդեռ սահմանված չէ որևէ կարգավորում այն մասին, հստակ չէ, թե ինչ նպատակ է այն հետապնդում, ինչ | Ընդունվել է<br>Սահմանվել է նոր 7-րդ հոդված | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպություն ունի այն անցկացնելու լիազորություն: | | |
| 17 | ՀՀ Աժ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Հոդված 9, Նոր՝ հոդ 12** | Հոդված 12. Օրենքի 26.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝<br>«Հոդված 26.1. Մշակութային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը<br>~~5.~~9. Մշակութային առանձին կազմակերպությունների՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, կինոարվեստի, թանգարանային, գրադարանային և արխիվային, որոնք համապետական և համազգային նշանակության բացառիկ գործունեություն են իրականացնում, կարող է շնորհվել «Համապետական» կարգավիճակ:<br>~~6.~~10. «Տարածքային» նշանակության կարգավիճակ շնորհվում է այն մշակութային կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են մարզի շրջանակում՝ բավարարելով մարզային բնակչության մշակութային պահանջմունքները:<br>~~7.~~11. «Տեղային» նշանակության կարգավիճակ շնորհվում է այն մշակութային կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են համայնքի շրջանակում՝ բավարարելով համայնքայի բնակչության մշակութային պահանջմունքները:<br>4. Գործող և նոր ստեղծվող մշակութային կազմակերպություններին «Համապետական, տարածքային և տեղային» կարգավիճակ շնորհելու, փոփոխելու և դադարեցնելու կարգը, նախապայմանները և չափանիշները հաստատում, ինչպես նաև համապատասխան կարգավիճակը շնորհում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազոր մարմնի առաջարկով:». | Ընդունվել է | Ընդունվել է |
| 18 | ՀՀ Աժ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 6, 9 Նոր՝ հոդ 9, 12** | «Ազգային» բառը «պետական» փոխարինելու փոփոխությունն անտրամաբանական է և իրավական իմաստով բացարձակ խոցելի. ,պետականե բառի արժևորումը փորձ է արվել լուծել վերջինս ,ազգայինե | Ընդունվել է մասնակի. Պահպանվել է այդ | Ընդունվել է մասնակի. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | եզրույթին փոխարինելու միջոցով<br>Պահպանել «Ազգային» կարգավիճակը՝ ազգային արժեհամակարգի փոփոխությունից և երկիմաստությունից խուսափելու համար: | կարգավիճակն ունեցողների համար, իսկ կարգավիճակի շնորհումը տարանջատվել «Համապետական, տարածքային և տեղային» նշանակության կարգավիճակների, որևէ կերպ չսահմանափակելով գործունեության շրջանակը | |
| 19 | ՀՀ Աժ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Հոդված 10 Նար՝ հոդ.13** | Մշակույթի զարգացման հիմնադրամի կանոնադրությամբ վերապահված է հանրային իշխանության գործառույթներ, հետևաբար՝ անհրաժեշտ է օրենքով ևս հստակ սահմանել հիմնադրամի նպատակները, գործառույթները և լիազորությունները՝ մշակութային կազմակերպությունների հետ հարաբերություններում: Առաջարկվում է.<br>Շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>Հոդված 12. Օրենքը լրացնել նոր՝ 26.2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.<br>« Մշակույթի զարգացման հիմնադրամի նպատակները և գործառույթները<br>1. Մշակույթի զարգացման հիմնադրամի նպատակներն են.<br>1) օժանդակել մշակույթի կառավարման | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արդյունավետ գործիքակազմի ներդրմանը.<br>2) աջակցել պետական մշակութային կազմակերպությունների ֆինանսական ինքնավարության խթանմանը, ենթակառուցվածքների զարգացմանն ու արդիականացմանը.<br>3) աջակցել պետական մշակութային կազմակերպությունների ֆինանսական ինքնավարության խթանմանը, ենթակառուցվածքների զարգացմանն ու արդիականացմանը.<br>4) իրականացնել մշակութային և ստեղծարար ոլորտների զարգացմանն ուղղված հեռանկարային ծրագրեր.<br>5) նպաստել հայկական մշակույթի միջազգայնացմանը:<br>2. Հիմնադրամն իրականացնում է պետական մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների.<br>~~4)~~7) մարքեթինգային գործառույթները,<br>~~5)~~8) վարչատնտեսական գործընթացի կառավարումը, այդ թվում՝ հաշվապահություն, գնումների գործընթաց, ընթացիկ տեխնիկական սպասարկումը,<br>~~6)~~9) իրականացնում է մշակույթի տվյալ ոլորտը կարգավորող օրենքներով սահմանված այլ գործառույթներ:<br>3. Հիմնադրամի գործառույթների իրականացման կարգը, ներառյալ պետական մարմինների հետ փոխգործակցության մեխանիզմները, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: | | |
| 20 | ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյան Կառավարություն | **Հոդված 12 Նոր՝ հոդ.15** | Անցումային դրույթները անհրաժեշտ է համապատասխանեցնել նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի տեխնիկական պահանջներին: Հանրային քննարկումների արդյունքում առաջարկվել է մինչև օրենքի ընդունումը Ազգային կարգավիճ ունեցող կազմակերպությունների կարգավիճակը և դրանից | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բխող իրավահարաբերությունները պահպանել: Հետևաբար առաջարկվում է. Շարադրել հետևյալ խմբագրությամբ. Հոդված 15. Անցումային և եզրափակիչ դրույթներ. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը: 2. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում: 3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղված և գործող «ազգային» կարգավիճակ ունեցող կազմակերպությունները պահպանում են իրենց կարգավիճակը: | | |
| 21 | ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան | **Հոդված 12 Նոր՝ հոդ.15** | Անհասկանալի է նաև հիշյալ հոդվածի 2-րդ մասով օգտագործված դրույթը. «Օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերն ու կանոնակարգերը ընդունվում են օրենքի ուժի մեջ մտնելուց 9 ամիս հետո»: Սա ժամկետ սահմանելու վերացական մեթոդաբանություն է․ հարկ է հստակ ժամկետ սահմանել, թե երբ պետք է ավարտել այդ գործընթացը: | Ընդունվել է, խմբագրվել է | Ընդունվել է, խմբագրված տարբերակը |
| 22 | | | Գործող օրենքի 32-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելով՝ շփոթվել է գործող օրենքը՝ դրանում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի հետ: Այդպիսով ամբողջովին կասեցվում է բուն օրենքն ամբողջությամբ, քանզի ուժի մեջ են մտնում ոչ միայն փոփոխություններն ու լրացումները, այլև արդեն իսկ ուժի մեջ եղած նորմերը: Սա հակասում է օրինաստեղծ գործունեության սահմանադրաիրավական հիմքերին: | Ընդունվել է Հղումը հոդվածին հանվել է | Ընդունվել է |
| 23 | | | Իրավաչափ չէ «Օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերն ու կանոնակարգերը» ձևակերպումը, քանզի օրենքից բխում են ենթաօրենսդրական նորմատիվ | Ընդունվել է Ընդունվել է, խմբագրվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ակտեր, որոնք ներառում են նաև կանոնակարգերը, որոնք ևս ենթաօրենսդրական ակտեր են, ոչ թե իրավական ակտի ինքնուրույն տեսակներ: | | |